

**ԵԼՀ Ֆակուլտետի գիտխորհրդի՝
08.06.2023 թ. կայացած նիստի թիվ 8 արձանագրություն**

Օրակարգ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում:
2. Ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
3. ՈւԳԸ նախագահի հաշվետվություն:
4. Ֆակուլտետի մեթոդ. խորհրդի 2022-2023 ուս. տարում կատարած աշխատանքների հաշվետվություն:
5. Ուսխորհրդի նախագահի հաշվետվություն:
6. Ընթացիկ հարցեր:

ԵԼՀ Ֆակուլտետի թիվ 8 նիստին գիտխորհրդի 36 անդամներից ներկա էին 31-ը: Նիստին ներկա էին նաև ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը, պրոռեկտոր Է. Ասրիյանը, որակի ապահովման կենտրոնի տնօրեն պ-ն Ա. Բուդաղյանը: ԵԼՀ-ի ծրագրերի փոփոխությունների հետ կապված պարոն ռեկտորը որոշ պարզաբանումներ արեց՝ մասնավորապես իր խոսքում նշեց, որ փոփոխությունները կապված է ԵՊՀ-ի ռազմավարության հետ, ինչը չպետք է անցնի միջանձնային հարաբերությունների սահմանը: Պետք է անցնել ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին: Ֆակուլտետում տարաբնույթ քննարկումներ են եղել, որոնք պետք է լուծվեն: Պետք է ծրագրերը հավատարմագրում անցնեն, որպեսզի հնարավորություն ունենան այդ ծրագրերով շարունակել: Այդ առումով պ-ն ռեկտորը հորդորեց ամբիոնների մասնագետների տարբերակներ մշակել հարցը լուծելու համար՝ հետագայում խնդրի առաջ չկանգնելու միտումով՝ հավելելով, որ ակնկալում է կոնստրուկտիվ մոտեցում: Ծրագրերի հետ կապված ռեկտորը խոսքը փոխանցեց որակի ապահովման տնօրեն պ-ն Ա. Բուդաղյանին, ով նշեց, որ վերջին շրջանում ծրագրերը գնում են հավատարմագրման, ինչն էլ մեծ ճանաչում է բերում համալսարանին, ընթացքը կարելի է հաջողված համարել, քանի որ շատ արտասահմանցի ուսանողներ են արդեն սովորում ԵՊՀ-ի տարբեր ֆակուլտետներում: Լեզու պատրաստող ծրագիրը տրամաբանական կլիներ, որ տվյալ լեզվի երկրի կողմից հավատարմագրվեր: Չորս ծրագրեր են համատարմագրվում, որը բավականին մեծ ծախսերի հետ է կապված: ԵՊՀ ռեկտորը, հավելելով պ-ն Բուդաղյանի խոսքին, ասաց նաև, որ նպատակահարմար է գտնում, որ հետագայում ուսանողներին միայն լեզվի մասնագետ չպատրաստել, այն նաև երկրագետ: Ֆակուլտետային գրասենյակների հետ կապված ասաց, որ շատ ֆունկցիաներ կան, որ օդում կախված են, գրասենյակի ստեղծման նպատակն է, որ գրասենյակի մասնագետներից ամեն մեկը պատասխանատու լինի համապատասխան գործառույթի համար: Դեկան Գ. Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփմանը: Նա նշեց, որ ընդհանուր առմամբ

նորմալ է ընթացել, սակայն հորդորեց իր գործընկերներին, որ նախապաշտպանությունը ավելի լավ անցկացվի, որ հետագայում խնդրի առաջ չկանգնեն:

2. Դեկանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփմանը՝ խոսքը փոխանցելով փոխդեկան Մ. Յաղուբյանին: Փոխդեկանը նշեց, որ ընդհանուր առմամբ մեն ինչ նորմալ ընթացքով է գնացել, մի փոքր աշխատանքների գործընթացը բարդացել էր հեռավար ձևաչափի պատճառով, սակայն ամեն ինչ հարթվել է:
3. Դեկանը, անդրադառնալով օրակարգի երրորդ հարցին՝ ՈւԳԸ նախագահի հաշվետվությանը, խոսքը փոխանցեց նախագահ Ֆ. Խաչատրյանին՝ հաշվետվությունը ներկայացնելու:

Նախքան ֆակուլտետային ՈւԳԸ գործունեության տարեկան հաշվետվությունը ներկայացնելը, Ֆ. Խաչատրյանը նշեց, որ իր վերջին հաշվետվության ներկայացումն է լինելու ֆակուլտետի գիտխորհրդի կազմում, քանի որ այս պահի դրությամբ արդեն իսկ դադարեցրել է ֆակուլտետային ՈւԳԸ նախագահի գործառույթները:

ԵՊՀ ՈւԳԸ այս տարվա վերջին ԳԽ նիստի ընթացքում որպես Թարգմանական հարցերով հանձնաժողովի նախագահ առաջադրվել է իր թեկնածությունը և քվեարկության արդյունքում միաձայն ընտրվել է այդ «հաստիքում»:

Անդրադառնալով ֆակուլտետային բուն գործունեությանն ու կատարած աշխատանքին, ֆակուլտետի ՈւԳԸ կազմը՝ միասնական աշխատանքի և միահամուռ ջանքերի շնորհիվ, կարողացել է իր առջև դրված նպատակներին և սահմանած նշաններին հասնել:

Այդ մասին են փաստում ԵՊՀ ՈւԳԸ կիսամյակային գործունեության ամփոփիչ նիստերի ընթացքում գրանցած արդյունքները և ՈւԳԸ-ականների գիտական ձեռքբերումները: ԵԼՀ ՈւԳԸ-ն, 3 կիսամյակ շարունակ, իրականացրած գործունեության համար **գերազանց վերապահումով** արդյունքն է գրանցել և արժանացել **պատվոգրերի**, իսկ ՈւԳԸ անդամներն այս տարի **«Լավագույն քարտուղար»** և **«Լավագույն անդամ»** անվանակարգերում նույնպես արժանացել են պատվոգրերի:

ՈւԳԸ անդամները նաև հանրապետության և բուհի մասշտաբներով են նշանակալի հաջողություններ ու ձեռքբերումներ գրանցել: Ֆակուլտետի ՈւԳԸ անդամ Նարե Շալունցը 2022թ. -ին **«Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի** հաղթող է ճանաչվել, իսկ **«ԵՊՀ լավագույն ուսանող 2023» մրցույթի** հաղթող ճանաչվել է ինքը/Ֆ. Խաչատրյանը /, ինչը մեծ պատիվ է համարում:

2022-2023 ուս. տարվա կարևորագույն իրադարձություններից մեկը ԵՊՀ ՈւԳԸ հիմնադրման 75-ամյակին նվիրված միջազգային 8-րդ գիտաժողովի պատշաճ կազմակերպումն էր: Գիտաժողովի շրջանակում ավելի քան 150 մասնակիցներ, այդ թվում՝ 8 երկրի 22 երիտասարդ գիտնականներ, ներկայացրել են իրենց զեկուցումները, և լավագույններն արժանացել են հավաստագրերի ու խորհրդանշական պարգևների:

Գիտաժողովի ընթացքում, «**Լեզվաբանության**» և «**Գրականագիտության**» բաժանմունքներում՝ հոկտեմբերի 3-ին և 4-ին պատշաճ կերպով կազմակերպվել է գիտաժողովի մասնակիցների զեկուցման գործընթացը:

Զեկուցումներով հանդես է եկել ինքը՝ Ֆարիդա Խաչատրյանը և Մանե Վարդանյանը (լեզվաբանության ենթաբաժանմունքում) և Ամալիկ Բաղդասարյանը (գրականագիտության ենթաբաժանմունքում):

Մասնակիցներին զեկուցումների վերջում տրվել են մասնակցության հավաստագրեր, ինչպես նաև համալրել ենք լավագույն զեկուցողների շարքերն ու զեկուցված հոդվածներն երաշխավորվել են տպագրության:

Գիտաժողովը պատճառ և նաև առիթ է հանդիսացել այս տարվա նախաձեռնությանը՝ **"Scientific Functional Corner"** գիտահետազոտական խմբակի ստեղծմանը: Հարթակի հիմնական նպատակն ուսանողների՝ *գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտությունների զարգացումն* է: Խմբակի շրջանակում ՈւԳԸ անդամներն կազմակերպել են սեմինար-քննարկումներ, սովորել և սովորեցրել՝ ինչպես ինքնուրույն հետազոտություն իրականացնել, կատարել են փորձի փոխանակում:

Առաջին կիսամյակի ընթացքում, համագործակցելով Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈւԳԸ-ի հետ, կազմակերպվել է «**Լատիներեն եզրույթները՝ դիվանագիտական փաստաթղթերում և բանավոր ձևակերպումներում**» խորագրով *միջֆակուլտետային օլիմպիադա*: Ամփոփելով օլիմպիադայի արդյունքները՝ 1-ին, 2-րդ և 3-րդ հորիզոնական զբաղեցրած մասնակիցներին տրվել են հավաստագրեր և խրախուսական նվերներ:

Թարգմանական հաջողված ծրագրերից մեկը՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի կողմից: «**Ուրտֆոլիո**» թարգմանական ծրագիրը:

Թարգմանվել են ռուս ժամանակակից գրողների ստեղծագործությունները, ինչպես նաև ամբիոնի ստեղծագործողների բանաստեղծությունները: Ծրագրին մասնակցել են արտասահմանյան գրականության ամբիոնի մագիստրանտները, ովքեր ՈւԳԸ անդամներ են և հանդես են եկել իրենց կատարած թարգմանություններով, որն արդեն իսկ տպագրվել է «**Ուրտֆոլիո**» վերնագրով:

Գերմանական բանասիրության ամբիոնի նախաձեռնությամբ ԵՊՀ բոլոր ուսանողների համար կազմակերպվել էին գերմաներենի անվճար դասընթացներ, որոնք անցկացրեց լեզվակիր, Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) դասախոս Դանիել Լեպետիտը: Դասընթացները նախատեսված էին ինչպես սկսնակների, այնպես էլ այն ուսանողների համար, որոնք արդեն ունեն գերմաներենի A1/A2 մակարդակի իմացություն և ցանկություն ունեն թարգմանվել հաղորդակցական հմտությունները:

Դասընթացներին ԵԼՀ ՈւԳԸ անդամները ևս մասնակցություն են ունեցել, դասընթացի ավարտին արժանանալով հավաստագրերի:

Ֆ. Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց տիկին Սավոյանին և ամբիոնին՝ ընձեռած հնարավորության և համագործակցության համար:

Մայիս ամսին գերմանական բանասիրության ամբիոնի և ֆակուլտետի ՈւԳԸ-ի համագործակցությամբ տեղի ունեցավ տեղեկատվական հանդիպում՝ գերմանական փոխանակման ծառայության (DAAD-ի) վրաստանյան գրասենյակի ներկայացուցիչների հետ (առկա ձևաչափով):

Հանդիպմանը ներկայացվեցին ծառայության կողմից տրվող հնարավորությունների, կրթաթոշակային ծրագրերի, դիմելու կարգի, պահանջվող փաստաթղթերի և այլ հարցերի վերաբերյալ մանրամասներ:

Տեղեկատվական հանդիպումը հատկանշական էր նրանով, որ մասնակցությունը չէր սահմանափակվում գերմաներեն բաժնի ուսանողների ներգրավվածությամբ և ԵՊՀ այլ ֆակուլտետների ուսանողներ, այդ թվում՝ Միջազգային հարաբերությունների, Իրավագիտության, ներկա էին մեծ հետաքրքրություն առաջացնող հանդիպմանը: Մասնակիցների հետաքրքրվածությունը առիթ դարձավ նաև շարունակական հանդիպումների:

Մ/թ. մայիսի 20-ին ԵՊՀ-ում երկրորդ տարին անընդմեջ կայացավ **«Հետազոտենք և բացահայտենք աշխարհը»** խորագրով **աշակերտական աշխատաժողով**, որը միտված է խթանելու աշակերտների հետազոտական ու հաղորդակցական հմտությունների զարգացումը և նպաստելու նրանց մասնագիտական կողմնորոշմանը:

ԵՊՀ ՈւԳԸ-ն աշխատաժողովին ապահովել է կազմակերպչական աշխատանքների պատշաճ կատարումն ու զեկուցումների անխափան անցկացման ամբողջ գործընթացը:

ԵԼՀ ֆակուլտետի ՈւԳԸ-ի նախաձեռնությամբ, անցկացվել է միջբուհական օլիմպիադաների շարք՝ նվիրված եվրոպական չորս կարևորագույն լեզուների՝ իսպաներենի, գերմաներենի, ֆրանսերենի և իտալերենի բազմակողմ ուսումնասիրմանն ու համապատասխանաբար անդրադառնալով՝ չորս երկրների մշակույթի, պատմության, գրականության նորովի բացահայտմանը: Օլիմպիադաների արդյունքների ամփոփմամբ՝ հաղթող մասնակիցները կրկին պարգևատրվել են հավաստագրերով:

ԵԼՀ ֆակուլտետի ՈւԳԸ ծավալած գործունեության համար շնորհակալություն հայտնեց ԵԼՀ ֆակուլտետի հարգարժան դեկան պարոն Բարսեղյանին՝ ՈւԳԸ-ին մշտապես աջակցելու և մարդկային բարձր որակների համար, փոխդեկաններ Մ. Յաղուբյանին և Ն. Մադոյանին՝ իրենց օժանդակության համար, ֆակուլտետի ՈւԳԸ գիտական խորհրդատու տիկին Ե. Երզնկյանին՝ իր հնարավորությունների սահմանում ցուցաբերած աջակցության համար և իհարկե ֆակուլտետային բոլոր ամբիոնների վարիչներին, դասախոսներին, ովքեր պատրաստակամորեն համագործակցել են և իրենց ներդրումն են ունեցել շատուշատ ծրագրերում:

4. Գ. Բարսեղյանը, անդրադառնալով օրակարգի չորրորդ հարցին, հրավիրեց Ֆակուլտետի մեթոդ.խորհրդի նախագահ Ն. Հարությունյանին, ով ներկայացրեց 2022-2023 ուս. տարում կատարած աշխատանքների հաշվետվությունը: Նա իր խոսքում նշեց, որ 2022-2023 ուսումնական տարում տեղի է ունեցել մեթոդ.խորհրդի 8 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցման որակի ապահովման և բարձրացման հետ կապված մի շարք հարցեր: Մասնավորապես.

ԵՊՀ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման և ԵՊՀ-ի «բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգ»-ի նոր կանոններին ծանոթանալու հարցը

- մագիստրատուրայում առարկայական փոփոխությունների՝ մասնավորապես «Արտասահմանյան գրականություն»

մասնագիտության՝ մագիստրոսական կրթական ծրագրի 2023-2025 թթ. ուսումնական պլանի մեջ փոփոխություններ մտցնելու հարցը

- **«Համեմատական գրականագիտություն»** (3 կրեդիտ) մասնագիտական պարտադիր դասընթացը տեղափոխել 1-ին կիսամյակ մասնագիտական դասընթացների կրթաբլոկ,
- **«Հոգեբանական տեսությունները և գրական տեքստը»** (3 կրեդիտ) և **«Արևմտա-եվրոպական գրական-գեղագիտական ուսմունքները»** (3 կրեդիտ) մասնագիտական պարտադիր դասընթացները տեղափոխել մասնագիտացման պարտադիր դասընթացների կրթաբլոկ՝ կրեդիտը դարձնելով 6,
- **«Գրականությունը և քաղաքականությունը»** (3 կրեդիտ) կամընտրական դասընթացը դարձնել մասնագիտացման պարտադիր դասընթաց՝ պահպանելով կրեդիտը,
- **«Գեղարվեստական տեքստի մեկնություն»** (3 կրեդիտ) տեղափոխել 3-րդ կիսամյակ մասնագիտացման պարտադիր դասընթացների կրթաբլոկ,
- **«Մտեղծագործական վարպետություն»** մասնագիտական պարտադիր դասընթացը (3 կրեդիտ) տեղափոխել մասնագիտացման կամընտրական դասընթացների կրթաբլոկ՝ պահպանելով կրեդիտը,
- **«Գրական տուրիզմ»** (3 կրեդիտ) մասնագիտացման կամընտրական դասընթացի կրեդիտը դարձնել 6,
- **«Գրական գործի մենեջմենթ»** (3 կրեդիտ) կամընտրական դասընթացը տեղափոխել մասնագիտացման դասընթացների կրթաբլոկ, 4-րդ կիսամյակ,
- Կամընտրական դասընթացների կրթաբլոկում ավելացնել **«Հռետորաբանության արվեստ»** (3 կրեդիտ) դասընթացը:
 - միջանկյալ գրավոր քննությունների թեստերի՝ ստուգման և գնահատման կիրառվող մոտեցումների քննարկումը:
 - դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական ձեռնարկների ու դրանց գրախոսության քննարկման հարցը.
 - 2022-2023թ ուս. տարվա ընթացքում մեթոդաբանական կոնֆերանսի անցումից տպագրության են երաշխավորվել ֆակուլտետի դասախոսների կոնֆերանսի կազմված 4 ուսումնական ձեռնարկ:
 - «Լեզու և գրականություն» կրթական ծրագրի վերաբացման, և կրթական ծրագրերի ղեկավարման հարցը:
- Ինչպես յուրաքանչյուր տարի՝ այս ուսումնական տարվա հունիսին ևս, սկսվում է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքի էլեկտրոնային տարբերակի վերանայումը: Ըստ այդմ, Ն. Հարությունյանը խնդրեց ամբիոններին՝ համագործակցել այս մասով:

5. Դեկանը, անդրադառնալով օրակարգի հինգերորդ հարցին, հրավիրեց ուսխորհրդի նախագահ Գոհար Հարությունյանին՝ հաշվետվությունը ներկայացնելու, ով իր խոսքում մասնավորապես նշեց.

Ուսանողական խորհուրդը ծավալել է բազմաբովանդակ գործունեություն՝ հիմք ընդունելով Ուխ կանոնադրությամբ սահմանված Ուխ նպատակները:

Միջոցառումների շարքը սկսվել է արդեն ավանդույթ դարձած Ուիլիս իրագրվածամբ, որի ընթացքում ֆակուլտետի առաջին կուրսեցիները ծանոթացել են Ուիլի կառուցվածքին, նպատակներին, գործող հանձնաժողովներին եւ դրանց գործունեությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԼՀ ֆակուլտետի ուսանողների հետաքրքրվածությունը էրազմուս+ ծրագրի հանդեպ բավականին մեծ է, հանդիպում-քննարկում է ծավալվել ծրագրի մասնակիցների հետ:

Առաջին քննաշրջանից առաջ հետաքրքիր հանդիպում է կազմակերպվել տիկին Մարինե Միքայելյանի հետ, ով բանախոսել է «Նախաքննական սթրեսի հաղթահարում» թեմայի շուրջ և օգնել է մի շարք ուսանողների հաղթահարել նախաքննական վախը: Շարունակելով ոչ-ֆորմալ կրթական հանդիպումների շարքը սեմինար-քննարկում է իրականացվել «Ժամանակի կառավարման հմտություններ» թեմայով:

Առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպվել է նաև փոքր մասնագիտական մրցույթ՝ «լեզուներ եւ մշակույթներ» խորագրով:

Մասնագիտության մեջ էլ ավելի հմտանալու նպատակով կազմակերպվել է սեմինար-բանախոսություն՝ «Լեզվին տիրապետելու լավագույն մեթոդները» թեմայով: Բանախոսել է ԼՄՀ ամբիոնի դասախոս, ասիստենտ Լիլիթ Բեքարյանը:

Ֆակուլտետում արդեն հիմք ենք դրել որոշ տոներ նշելու ավանդույթին՝ ինչպիսիք են Thanksgiving-ը եւ Սուրբ Ծնունդը:

Առաջին կիսամյակի ընթացքում մի շարք սպորտային ներֆակուլտետային մրցաշարեր են կազմակերպվել շախմատից, վոլեյբոլից եւ այլ մրցաձեւերից, ինչպես նաև տարբեր միջֆակուլտետային խաղեր:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հետ համատեղ ծրագիր է իրականացվել՝ անգլերենի դասընթացներ ֆակուլտետի ուսանողների համար, որտեղ դասավանդել են մեր ֆակուլտետի բարձր կուրսերում սովորող եւ գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողները:

Երկրորդ կիսամյակի շրջանակներում նշվել են ադեն ավանդույթ դարձած տոներից երկրորդ կիսամյակում Տյառնընդառաջը եւ գրքի տոնը:

Երկրորդ կիսամյակի ընթացքում հանդիպում-քննարկում է իրականացվել Անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս, դոցենտ Նարինե Մադոյանի հետ՝ «Netiquette-ի դերը առցանց հաղորդակցության մեջ» թեմայով:

Կայացել է եւս մեկ սեմինար «Հաղորդակցման էթիկա » թեմայով, որտեղ բանախոսել է Էթիկայի դպրոցի տնօրեն Գեորգ Մկրտչյանը:

Անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս, պրոֆեսոր Ալվարո Զիվանյանի հետ կազմակերպվել է հանդիպում-քննարկում «Այն ամենը ինչ չգիտեիք Հարրի Փոթերի մասին» թեմայով: Կայացել է փիլիսոփայության եւ հոգեբանության ամբիոնի դասախոս, ասիստենտ Օլսաննա Նահապետյանի հետ «Փիլիսոփայություն բոլորի եւ յուրաքանչյուրի համար» թեմայով, ունեցել ենք նաև երկրորդ կիսամյակի ընթացքում, եղել է PR եւ հաղորդակցություն թեմայով:

Այս տարի ԵԼՀ ֆակուլտետի ուսանողների նախաձեռնությամբ պատրաստել ենք փոքր տեսահոլովակ, որտեղ ուսանողները տարբեր լեզուներով պատմում են Մեծ Եղեռնի մասին: Հոլովակը բավականին տարածում է ունեցել եւ այժմ ունի ավելի քան 145000 դիտում:

Ամբողջ տարվա ընթացքում համագործակցելով Ֆրանսիական բանասիրության ամբիոնի հետ իրագործվել է «Ֆրանկոֆոնների խմբակ» ծրագիրը եւ եկող տարի նախատեսվում է ընդլայնել ծրագիրը՝ հիմնելով իսպանախոսների եւ գերմանախոսների խմբակները:

Մինչ ընթացիկ հարցերին անդրադառնալը Գ. Բարսեղյանը իր շնորհակալությունը հայտնեց փոխդեկան Ն. Մադոյանին իր կատարած աշխատանքի համար, հավելելով, որ փոխդեկանը որոշել է դադարեցնել իր լիազորությունները այդ պաշտոնում, քանի որ ցանկանում է այլ ծրագրերի մեջ ներգրավվել: Դեկանը նշեց, որ Ն. Մադոյանը հսկայական աշխատանք է կատարել ֆակուլտետի համար, մեծ ու կարևոր է եղել նրա աշխատանքը հատկապես հեռավար ձևաչափով դասերի կազմակերպման գործում:

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

Միաձայն քվեարկության արդյունքում որոշեցին .

- Երաշխավորորել Ամալյա Արմենի Սողոմոնյանի «Պատմական և իրական ժամանակը Խալեդ Հոսեյնիի վեպերում» մենագրության տպագրությունը, խմբագիր հաստատելով փ.գ.թ. դոցենտ, Դավիթ Մոսինյանին:
- Բավարար համարելով կատարված աշխատանքը, երաշխավորել ատեստավորման արտասահմանյան գրականության առկա ասպիրանտ Մարիամ Մարտիրոսյանին:
- Բավարար համարելով կատարված աշխատանքը, երաշխավորել ատեստավորման արտասահմանյան գրականության ամբիոնի առկա ասպիրանտ Գայանե Գրիգորյանին:
- Երաշխավորել անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վերոնիկ Խաչատուրյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու գործընթացին մասնակցելու երաշխավորման համար:
- Հաշվի առնելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի 1-ին տարվա առկա ասպիրանտ Հասմիկ Չալոյանին:
- Դրական գնահատելով անգլիական բանասիրության անբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նելլի Սարգսյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան:
- Դրական գնահատելով անգլիական բանասիրության անբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Զարա Հայրապետյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան:
- Դրական գնահատելով անգլիական բանասիրության անբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Արաքսյա Ստեփանյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան:
- Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունը՝ հաստատել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Աննա Սարգսյանի՝ «Լեզու— գենդեր հարաբերակցության հանրալեզվաբանական ուսումնասիրությունը ամերիկյան հեռուստաշարքում (հայերենի զուգադրությամբ)» թեկնածուական ատենախոսության թեման:

- Հաշվի առնելով անգլիական բանաստիճարության ամբիոնի հայցորդ Լուսինե Մադայանի՝ ճանաչողական լեզվաբանության հիմնադրույթներով կատարած աշխատանքի հիմնական էությունը՝ որոշվեց հաստատել նրա թեկնածուական ատենախոսության «Ժամանակ հասկացույթի առկայացումը բրիտանական հեքիաթներում (հայկական հեքիաթների զուգադրությամբ)» վերաձևակերպված թեման: Որոշումն ընդունվեց միաձայն:
- ԵԼՀ անգլիական բանաստիճարության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ռ.Առաքելյանի «Introducing Psycolinguistics» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ԵԼՀ ֆակուլտետի
ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝
08.06.2023



Մ. Դավայան